

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՏԵԼԵՓՈՆ № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով.

Յայտարարութիւններ համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ

ՏԵԼԵՓՈՆ № 253.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՆԵՐ

ԲԱՅԱՆՈՒՆ ԵՒ ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻԿԱՅ 1897 ԹԻՎԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

25-րդ ՏԱՐԻ

25-րդ ՏԱՐԻ

ԴՐԱՎԱՆՆԵՐԵՐ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակուի Թիֆլիսում, նոյն գիւրդով, նոյն պրօգրամով և նոյն ուղղու-
թեամբ: Մենք ստանում ենք սեփական հեռագիրներ:

«ՄՇԱԿ» տարեկան գինը թէ՛ Ռուսաստանում և թէ՛ արտասահմանում 10 ռուբլի է, տասն և
մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., վեց ամսականը՝ 6 ռ.,
հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի ամսա-
կանը՝ 1 ռուբլի:

«ՄՇԱԿ» գրել կարելի է ԽՐԱՎԱՆՆԵՐԸ (Բաղրամյան և Բարոնակյան փողոցների անկիւն):
Կայտարարութեան ուրիշ քաղաքներէն «ՄՇԱԿ» գրելու համար, և առհասարակ նամակներ և
ծրարներ ուղարկելու, պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ», իսկ
արտասահմանէն՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունւում են թէ՛ հայերէն, թէ՛ ռուսերէն և թէ՛ օտար լեզուներով.
բառին վճարւում է 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կապիտալը գրականութեան մէջ, Հեռագիրներ.
Թիւրքաց պաշտօնական հաղորդագրութիւն.—
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Հերթական խնդիր. Մատե-
նագրութիւն. Նամակ. Դարաքիւսայից. Նամակ
Շուշուկից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Ֆուտա-
լիստայի կտակը. Սով է Հնդկաստանում. Նամակ
Պարսկաստանից.—ԽԱՆԻ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՆՈՒԿՈՒ-
ՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱ-
ՍԻՐԱԿԱՆ. Լեռնայից:

ԿԱՊԻՏԱԼԸ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Միւս լրագիրներին հետ՝ մենք էլ հա-
ղորդեցինք, որ Բագուի յայտնի թուրք զը-
րամատէր թաղին մտադրութիւն ունի
գնել «Kacni» լրագիրը (կամ մի ուրիշ
լրագիր) և հրատարակել այդ թերթը՝ իր
իրաւունքի տակ: Տեղական ռուս լրագիր-

ներէն մէկը մինչև անգամ աւելացրեց, որ
Թաղին մէջ արդէն ձեռնարկել է նոր խմբա-
գրութիւն և ան կազմակերպութեան և հը-
րաւորում է նոր աշխատակիցներ, ի թիւս
որոց մի թուրք ժուրնալիստ այն է Շախ-
տախտիսկուն:

Մեզ համար, բացարձակ ենք ասում,—
միանգամայն ցաւալի կը լինի, եթէ այդ
լուրը ճշգրիտ, և մի թուրք զրամատէր, որի
գործունէութեան ասպարէզը նաւթային
հորերը և բորսան էր, ոտը դնի մի այն-
պիսի, զրամի և կապիտալի հետ ոչինչ
կապ չունեցող, ասպարէզի վրա, ինչպէս
կապակցութեան ասպարէզը: Մեր այդ
ցանկութիւնը հիմնված է այն պարզ,
տարրական ճշմարտութեան վրա, որ ոչ մի
բան այնքան չի կաշկանդի մտքի և գրողի
ազատութիւնը, որքան փողը, որը ներկայ
հանգամանքներում, ընդունակ է գրել զը-
րողին անկախ դատելու կարողութիւնից և

գարձել նրան վարձկան, գրիչ ծախող, և
փող վճարողի քմահաճոյքներին դերի:

Անկասկած, վերին աստիճանի ցանկալի
է, որ մեր հարեան թուրք հասարա-
կութիւնից զուրս գան մարդիկ, և ստեղ-
ծեն թուրք համայնքի շահերին նուիրած
օրգաններ, բայց միանգամայն ցանկալի է,
որ այդ մարդիկ զուրս գան զրամատէրերի
չըջանից, որոնց ոյժը և ձգտումները բըղ-
խում են ոչ թէ զաղափարական աշխար-
հից, այլ այն զգայմունքից, թէ «փող ու-
նեմ և կանեմ, ինչ որ ուզում եմ»:

Միջ համար, օրինակ, շատ ուրախալի է
տեսնել, որ նոյն իսկ «Кавказ» պաշտո-
նական օրգանը, որը սովորաբար անցնում
էր զրականութեան հետ շատ քիչ կապ
ունեցող անձանց ձեռքը, այս անգամ յանձն-
վեց մի շնորհալի գրողի ձեռքը, ինչպիսին է
բանաստեղծ-գրող Վելիչկո, որովհետեւ զը-
րականութեան և մամուլի շահը, ուրեմն
նոյն իսկ հասարակութեան շահը պահանջ-
ւում է, որ այդ ասպարէզի վրա գործեն
ոչ թէ նշանակված պաշտօնեաներ, այլ
կոչմամբ և հակումներով գրող լինելու ըն-
դունակ մարդիկ, որոնք չեն դաւաճա-
նի իրանց սիրած ասպարէզին, և չեն
գարձել նրան անբազար փողովոյ քամիներ-
ը ազդեցութեան առարկայ:

Կատարեալ դժբաղդութիւն է գրակա-
նութեան և մամուլի համար, երբ լրագի-
րը անցնում է մի որ և է գրամատէրի, որ
և է վաճառականի, որ և է բանկիրի, կամ
առևտրականի հաշիւներով խեղդված մարդ-
կանց ձեռքը, և այդ պատճառով միանգա-
մայն ցանկալի է, որ զիցուք Բագուի մէջ
մամուլն էլ կախված լինի մի թաղինից,
որը ինչքան էլ շնորհով առևտրական լինի,
այնու ամենայնիւ, երբեք չէ կարող մամու-
լի ասպարէզում բարեկրիչ զեկալիս մարդ-
կանց, որոնք ունեն մտածող զուրկ և մա-
քուր ձեռքեր, և ոչ թէ այնպիսի մարդ-
կանց, որոնց մասնները բթացել են փողի
համբարով, և որոնց ականջները՝ համբար-
չիւնկոյի ազդեցութեան տակ անկարող

են լսել ժողովրդի վշտալի աղաղակը, վըշ-
տահար մարդկութեան ցաւերի խուլ ար-
ձագանքները...

ՀԵՌԱԳՐՈՒՆԵՐ

(Ռուսաց զործակալութեան)

Լ. օ. Դ. օ. Դ. 9 նոյեմբերի: «Daily News» լրա-
գրի խօսքով, թիւրքաց ստիսկանութիւնը ձեռ-
բակալեց և Կ. Պոլիս ուղարկեց Մակ-Կոլում ա-
նունով անդիակաւ պատուօրին, երբ նա Մարտ-
շում նպատակներ էր բաժանում յետապահներին:
Կ. Պոլիս, 10 նոյեմբերի: Հայ-կաթողիկ Յե-
րիգ-Եֆէնդին Հաջինի զայմագամ է նշանակված:
Հայ Նաղարէթ-Եֆէնդին նշանակված է խաֆիի
զայմագամ:

Ֆիլիպ օ. Կ. 10 նոյեմբերի: Կ. Պոլսից հա-
ղորդում են, որ Աղիգ-բէյ, նախկին զինւորական
կցորդը Պետերբուրգում, գլխավոր զորաբա-
նի հրամանատար Ռեյս-փաշայի որդին, և լեյ-
տենանտ Ասիմ-բէյ, Հալեպ աքսորված իգէտ-փա-
շայի որդին, Եւրոպա փախան: Զինւորական ա-
կադէմիայի 15 ունկնդիրներ ձերբակալվեցին, ո-
րովհետեւ նրանց մօտ գտան արգելված բրօշու-
րներ և նրանք դրամ էին հաւաքում «Երիտասարդ
Թիւրքիա» կուսակցութեան համար:

ԹԻՒՐԿԱՅ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Թիւրքաց ղեկավարները ուղարկել է Ռէյտէ-
րի հեռագրական գործակալութեանը հետեւեալ
հաղորդագրութիւնը նոյեմբերի 7-ին.

«Պաշտօնական շրջաններում հաւատացնում
էին, որ Բ. Կուսը հնարում է յեղափոխական
չարժանների գործը. սակայն ղեռ. հոկտեմբերի
13-ին ներքին գործերի մինիստրի անունով
ստացվեց էրզրումի նահանգապետից մի հեռա-
գիր, որի մէջ ասված է հետեւեալը. «Տեղական
վարչութիւնները տեղեկանալով, որ քաղաքում
ապրող ոչ բնիկ մի հայ, Յարութիւն Կիրակոսեան
անունով, աշխատում է տարածել յանցաւոր թըղ-
թեր, կաշանատրեցին նրան: Բանտում նա խոս-
այն մեծերին, միայն խելօքներին չէր յայտնի:
Նրան ակնաւ չէր դնում ամեն հասակ, լսում էր
երիտասարդ տղան, լսում էր և մանկահասակ
աղջիկը: Սարեցին օրհնում է այդ գերեզմանե-
րի անունով, ինչպէս և անիծում է նրանց բե-
րանով: Դրանց մօտ են կնքվում բերանացի դա-
շինքներ, կատարվում է երգում, ուխտ: Եւ չը կայ
ժողովրդի մէջ մի օրհնել, մի սովորութիւն, որ
գերազմանիքից լավից խօսը չը լինէր:

Խուլը յիշում է իր սկիզբը այն օրից, երբ
գանվեց երկաթի հանքը: Շէն գիւղի առաջ, աղ-
բիւրի ձորի վերին մասում, բաղմադարեան
կաղնին մի մեծ գերեզմանի վրա է տարածել
իր ձեւերը: Ան սալ քարը չատ է խրվել հողի
մէջ, բայց ժամանակը չէ կարողանում անյայ-
տացիել նրան: Կա խուլի առաջին երախտա-
ւորն է, առաջին դարբէնը: Կա էր որ առաջին
խուլի կուցը: Այն օրվանից խուլը իր սեփական
հացն ունի: Տարինը անցան, առաջին դար-
բինը տեսաւ որ խուլը մարդկանց խեղճացնում
է: Յայտնի դարձաւ, որ ով ունի մշտական
հաց, ունի և մշտական իշխում: Մտածեց, մտա-
ծեց և մի օր նոյն երկաթից, որ խուլ է դառ-
նում, նա շինեց և սուր: Նա ասաց. «խուլն ա-
ռանց սրի և սուրը առանց խուլի արտասուք
են»:

Նրանից հետո, ժայռոտ բարձրութեան գըլ-
խին, ինչ որ տիտանեան պատի մնացորդներն
են երևում: Պատի ետեւում ծառեր չը կան. և
տարվայ մէջ չորս ամիս շարունակ բարձրահա-
սակ ծաղիկները չըջապատում են մի երկար ու
լայն քար: Խուլից ղեկի ալտաղ էլ մի ակի
լայնութեամբ ձանապարհ ունի տարած: Այդ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԼԵՈՒՆՑԻՆԵՐԸ

I

ԽՈՍՈՒՄ ԵՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ա.

—Խուլիցին իր սարերի ժայռն է, իր ծմակ-
ների արը:

Ամեն տեղ աղբակ են խօսում: Եւ եթէ ու-
զում ես իմանալ այդ կոչող ու կապիտալ մարդու
տեղը, լուս. նայիր պատմողին. նա աչքերով եր-
կնքն է ցոյց տալիս:

Եւ իրաւ: Ահա թէ սարերը ուր են տարել այդ
ամբողջ երկիրը—ուղիղ ամպերի տակ...

Դեռ այնտեղ էլ սարեր են բարձրանում, և
այնտեղ էլ սարերը մտիկ ձորեր են սեղում ի-
րանց մէջ: Անտառը ծածկել է ամեն ինչ, մերկ
թփերով միայն ժայռերի միջիտարի դեղերը,
որոնց այս ու այն կողմն է չարտել լեռների քը-
մահանութիւնը: Կէս տարի մի դառն ու անգութ
ձմեռ. տիրում է այնտեղ: Բայց զարնանը խուլը
կանանչների մի միապաղպղ բարձրութիւն է, որ
համարում է երկնքին:

Ամեն ինչ հակայական, ամուր ու դաժան է
այդ սարերում: Ժողովուրդը խումբ խումբ ցըր-
ված է փաղերից գիւղերի մէջ: Խաչ սրանք մի յան-
գընութեամբ, որ միայն լեռնային է յատուկ,
կպել են ժայռերի ուտերին, անվրդով նայում
են անյատակ ձորերին: Հանապարհ, հաղորդակ-
ցութիւն չատ մի օրհնելի, այգիլի բաներ չէ
սիրում սարի բնութիւնը, և զիւղերը միայն ա-
նունով են հարեան:

Շատ սէր և բարեկամութիւն չունի խուլը
նաեւ զրոյի աշխարհի հետ: Գազաթների ծայրից
մի հատ քարէ կածան է իջնում: Նա քերում է
ժայռերը, սողում է լանջերի վրա, գահավիժում
է ահաւոր կրիներին մէջ և այնտեղից զուրս է
վազում բարձրութիւնների գլուխը, ուրվում է
ձորերի կողերով, ակնաւ չէ դնում նրանց խոր-
բերում կատաղած ջրերին և յանկարծ, բոլորա-
վին անսպասելի կերպով, հանում է խուլի
ստորտը: Այստեղ արդէն լոյս-աշխարհի սկիզ-
բն է:

Բայց բանուկ չէ այդ ձանապարհը: Գաշտե-
ցին քաշվում է սարի արջերից, նրանցով է վա-
խեցնում իր երեխաներին: Գիտէ նա, որ արջե-
րը ծմակի մեղմութիւն են սիրում, ուտաի
և չէ բարձրանում այդ քարայրին կածանով: Խու-
լիցին նոյնպէս շատ քիչ է դաշտ իջնում: Եւ
նա ունի իր պատճառը:

Գաշտեցին շատ էր թոյլ ու խեղճ, շատ էր
ենթարկված բախտի դաւնութեան: Երկնքի տակ
եթէ խուլից էլ բարձր սարեր լինէին, դարձեալ
նրանց գլուխը կը հասներ դաշտեցու լացի ձայ-
նը: Նրան կողոպտում, հարստահարում էին ա-
ռանց որ և է դժուարութեան: Նա սեփականու-
թիւն չունէր, ոչ միայն ապրանք ու տուն, այլ
և կին ու աղջիկ գործերին էին պատկանում: Նա
միայն լաց լինել գիտէր:

Եւ երբ այդ լացը արձագանք էր տալիս սարի
գազաթին, խուլիցին նայում էր իրան և հար-
ցնում էր.

—Գու էլ այգիլս կը լինես:
Ու վազում էր իմանալու, թէ խուլիցին չօ
չէ դադարել արջ լինելուց:

Պատասխան տալիս էին մեծ մեծ, հուժկու
մարդիկ, որոնք աշխարհի սկզբից վայրենի, բայց
ապական խուլ են պահել, և հէնց այդ պատճա-
ռով կենդանի են մնացել:

Դրանք հակա գերեզմաններ էին: Հասարակաց
գերեզմանատները չէին դրանց տեղը: Խաբան-
չիւր գիւղ իր սիրած անկիւններն ունէր և այդ-
տեղ էր պահում իր սպաւերին:

Մարդկային արհեստը չէր չափուել այդ յաւի-
տեանական քնակարանները: Ժայռերից պոկած
ահագին բեկորներ էին դրանք, հակա ոսկորների
հաւատարմ անհաղաթանքներ: Գիւղից մինչև այդ
քարերը ձգվում էր փոքրիկ ձանապարհը, որը
երբեք չէր ծածկվում խոտաբույսերի տակ. նրա
վրա միշտ յետ ու առաջ էին շարժվում մարդ-
կանց կրօնկները: Գնում էին, հաւաքվում էին
քարերի մօտ և շարժում, բարձրացնում էին այն
պատմութիւնները, որոնք պահված էին նրանց
տակ: Քարը չունէր գիր ու յիշատակ. միայն
մամուլն էր նրա վրա փափուկ գորգեր հիւսում:
Եւ հարկաւոր չէին ոչ ձիւղ անուններ, ոչ էլ
թաւան, որ չափում է անցած ժամանակը: Բա-
ւական էր այն, որ խուլիցին այդ բոլոր մեծե-
րին հայր էր անուանում: Եւ երբ քարը խօսում
էր ձերբեր բերանով, երբ աւանդութիւնը ան-
սխալ պատմում էր այն ամենը, ինչ որ իր հետ
քարի տակն էր տարել անցած գնացած ժամա-
նակի հերոսը, խուլիցին նոյն ջրեմեանանդու-
թեամբ փառը էր տալիս երկնքին, ինչպէս այն
ժամանակ, երբ լսում էր իր փոքրիկ եկեղեցու
մէջ քահանայի ձայնը:

Խուլի գերեզմանների վրա խուլի ամբողջ
պատմութիւնն էր խօսում օր ու գիշեր: Նա միմի-

տովանեց, որ ինքն ուղարկված է կենտրոնական հայ յեղափոխական ընկերութեան կողմից, լճա- դոնի կօմիտէի հրահանգներով համաձայն, հե- տադօտելու այդ տեղերը այն դիտումով, որ յուզմունքներ առաջ բերվին մուսուլմանները դէմ: Այդ քննութիւնը բացեց մի դատադրութիւն, որ պատրաստվում էր ինքուրմից չօրս ժամ հե- ուս գտնվող կիզկան վանքում, որտեղ գտնվե- ցին ապստամբական թղթեր հայերէն լեզուով, որ կազմել էր վանահայրը և բազմաթիւ հրա- ցաններ ու փամփուշտներ: Թղթերը հմուտ հե- ղինականներ ձեռքով թարգմանվեցին և վանա- հայրը դատի կանչվեց:

Հայն ժամանակները տեղական իշխանու- թիւնները, վախենալով յուզմունքներից, հրաւի- րում էին քրիստոնեաներին և մուսուլմաններին աշխատել ու սղապանել կարգը և խաղաղու- թիւնը: Հետո քաղաքի մի քանի պատեւիկներ եկան և յայտնեցին վախին, որ հայ յեղափո- խականները ժողովում են մի տան մէջ, որ նրանց գումարկելու տեղն է: Տունը չբնապատ- վեց զաւթիկաներով և յեղափոխականները կա- լանաւորվեցին: Նրանց մօտ գտան մի հրացան, որի վրա նշանակված էին յեղափոխական կօմի- տէի սկզբնապատեւը, մի կայքին, մի քանի բե- վօլվեր, յեղափոխական թղթեր և մի քրդական զլխաչոր: Մի ուրիշ տեղ, Մեթրիկի վանքում, երբ ոստիկանութիւնը վրա հասաւ, տեսաւ 17 հայ, որոնք խում էին, զուարճանում, յեղափո- խական երգեր երգում: Նրանցից 13-ը կալանա- ւորվեցին, իսկ չօրսը փախան, վանքում գտնու- վեցին անազին թուղ յեղափոխական զրուած- ներ և կալանաւորվածներն էլ պարծենում էին, որ իրանց դիտաւորութիւնն էր ապստամբութիւն առաջացնել:

Հիշողութիւններ կազմուցնելը կրկնութիւնն են այն բանի, որ տեղի ունեցաւ վանքում: Ինչ վերաբերում է նեստօրական եպիսկոպոս Գաբ- րիէլի սպանութեան, որ վերագրում են թիւր- լերին, սուտ է, նրա սպանողները սահմանաքե- ղակ պարսիկներն են և այդ սպանումով բոլոր այն հարցադրումները, որ տեղի ունեն այդ ա- ութիւնով, անարդար են: Հանգստութիւնը վերա- կանգնած է: Կեսարիայի և Բերիթի բրիտանական և մահմետական նշանաւոր անձինք յայտնեցին սուլթանին և տեղական իշխանութիւններին ի- րանց երախտագրութիւնը կարգի վերականգ- ման և երկու տարբեր յարաբերութիւնների բարեկաւութեան համար:

Ինչ վերաբերում է Այնթափի յուզմունքներին, զրանց պատճառն այն է, որ բողոքական դպրոց- ների ուսուցիչները արձարաններում լսել էին զանազան լուրեր և վրդովանալով մէջ էին ըն- կել: Կարգը պահպանվեց և խանութները բաց- ըլարը պատմում է այն կտակը, որ արգելել է խոթեցնու երբ և ինչ աչք զննել ուրիշի հացին:

Նրա ժամանակ խոթել կօմի ունէր: Երկրի թշնամին միշտ մի և նոյնն է—մի վրամաքնակ էր, որ արդում է սարերի միւս երեսին, կա- նաչ լանդերի վրա, դաշտից ոչ շատ հեռու: Պող- վատ և կայծ շատ կայ այդ ցեղի արեան մէջ: Այդ է պատճառը, որ խոթի բոլոր գերեզման- ները շատ հին ժամանակներից անհայտ թշնա- մութիւն են քարոզում նրա դէմ: Վրամաքնակ ցեղն էլ իր հին աւանդութիւնն ունի խոթեցնու մասին: Եւ երկու կողմը դարերից ի վեր սուր են բանեցնում միմեանց դէմ: Սարերի լանջերը շատ և շատ անգամ են կատաղի կռիւների վայր եղել: Բայց նրանցից ոչ մէկը նման չէր այն կռիւին, որ վարում էր տիտանեան պատի ետե- ւում, ծաղիկները մէջ թաղված մեծ գերեզմանի մարդը:

Կրիւն ձգգվեց մի քանի ամիս: Գթախտու- թիւնն այն էր, որ այդ տարի խոթեցնին հաց չունէր, որովհետեւ ծախքների մէջ տարածված փոքրիկ արտերը փչացել էին: Պէտք էր որ թըշ- նամին էլ սովի ճանկն ընկնէր, որպէս զի լըշ- նամին հաւատար օյթերով կուրել: Վրամա- քնակ ցեղը ոչ ցանել զիտէր և ոչ հնձել. շատ վաղուց այդ գործը նրա համար կատարում էր դաշտեցին: Մի մարդ իջաւ քարայրն կածանով, զնաց դաշտը և այնտեղ հասկացրեց, որ խոթել երբեք չի ընկնիլ քաղցածութիւնից, բայց ամօթ է որ քրիստոնեան անօրէնին հաց տայ և պահ- պանէ նրան մի այնպիսի կուրի մէջ, ուր միւս կողմը, որ նոյնպէս քրիստոնեայ է, թուլացած է հացի պակասութիւնից: Պատգամաւորը քարո-

վել են: Նրանիսկան փոխ-հիւպատոսը գալով Այնթափ համադրեց, որ իրերի դրութիւնը բար- ւորված է և յայտնեց, որ նա այդպէս էլ կը դե- կուցանի իր կառավարութեան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Ինչպէս յայտնի է, երկրագործութեան մի- նիստութիւնը, իր հաստատվելու օրից, որո- չեց պարբերաբար հրաւիրել առանձին ժո- դովներ, որոնց արվեց գիւղա տնտեսական խօրհուրդ անուանը, և որի կազմողները պէտք է լինեն մի կողմից Առաքաւորութեան զանազան մա- սերից հրաւիրված գիւղատնտեսներ, միւս կող- մից՝ երկրագործութեան մինիստրութեան պաշ- տօնեաներ: Այդպիսի մի խորհուրդ կայացաւ 1895 թվին և, իբրեւ առաջին փորձ, ունեցաւ բաւական աջողութիւն: Ներկայ նոյեմբեր ամսի առաջին օրերից սկսվեցին և բիւրոսը խօր- հուրդի նիստերը:

Այդ խորհուրդի քննութեան աւարկաները շատ ծանրակշիռ են և դժուար լուծելի: Առա- չին հարցը պէտք է լինի մշակել նահանգական և գաւառական գործադիր մարմինների ծրագրի- րը: Այդ գործադիր մարմինները նպատակ պէտք է ունենան կապելու մինիստրութիւնը գաւառ- ների հետ, ստեղծելով այնպիսի յարաբերութիւն- ներ, որոնցով մինիստրութիւնը կարողանար ան- ընդհատ հետեւել կեանքի մէջ առաջ եկող պա- հանքներին և լրացնել տեղական կարիքները: Երկրորդ հարցը գիւղատնտեսական կրթու- թեան գործի կազմակերպութիւնն է: Վերջին տարիները ընթացքում ժողովել են շատ փա- տեր և դիտողութիւններ գիւղատնտեսական կըր- թութեան վերաբերմամբ և մինիստրութիւնը մշակել է ինքը իր կողմից ծրագրեր, որոնց պէտք է ենթարկի ներկայ խորհուրդի քննութեան: Բացի այդ երկու կարեւոր հարցերից, կան և մի քանի ուրիշներ, ինչպէս է, օրինակ, պարտիզ- պանութեան զարգացումը և մի քանի ուրիշներ, որոնց քննութիւնը առանձին մեծ դժուարու- թիւն չէ ներկայացնում:

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

I

Հիւսիսային տեղիւնն առաքելոց անվա- ւերական կանոնաց մատնանը, թուղթ Զակարյայ առ Կորնտոս և կանոնը Թաղդէի, գրեց հ. ծ. վ. Տաչեան: Վիէննա, 1896:

Հայոց եկեղեցու վարչական և կանոնական օրէնքների մէջ մեծ դեր է կատարել Վարդա- պետութիւն առաքելոց անուանով գրաւոր յիշա-

ղեց որ դաշտը կարող է միանալ սարի հետ և այն ժամանակ վայրը տարել է վրանների մէջ ապրող գաղանձներ: Մի քանի օրից յետոյ խու- թը պատասխան տալու: Գաշտեցին ստում էր որ ինքը չէ կարող, որովհետեւ խեղճ է: Եթէ խոթեցին քաղցած է, թող իջնէ ու հաց տանէ: Դաշտում այս տարի այնպիսի առատութիւն է, որ շատ երկիրներ կարող են կերակրվել:

Ինչ անել: Սարում արդէն լացի և յուսահա- տութեան ձայն էր բարձրանում: Բայց մի օր Բղդոն, խոթեցնիների գլխաւորը, խօսք սկսեց բանական:

— Կուր թուղթ ժամանակն է, ասաց նա,— ցըր- տելը դալիս են, նրանք միշտ մեր աջ թնն են եղել: Եւ չեմ թողնի որ այսպիսի ժամանակ մի հատ խոթեցնի հեռանայ սարերից: Չենք ու- ղում այն հացը, որից մեր թշնամին էլ է ու- տում: Գաշտեցին, ճշմարիտ է, մեր հաւատիցն է, բայց մեր բարեկամը չէ, նա հաց է տալիս մեր թշնամուն, ուրեմն նրա կողմն է: Մենք չենք գնալ նրանից հաց խնդրելու, ինչպէս երբեք չենք խնդրի մեր թշնամուց:

Խօսք ու զրոյցից երևաց, որ Բղդոն շատ լաւ է ասում: Սարեցին ուրիշի դռնից հաց չի մո- րայ: Նա կարող է կծել իր չիբուխի կոթը և օ- բեր ու չարախներ բերանում մի կտոր հաց չը դնել: Բայց Բղդոն մոռանում էր, որ կան երեխա- ներ: Նրանց հաց է հարկաւոր:

Բղդոն ծիծաղեց. դուր են կարծում թէ ինքը այդքան անհասկացող է: Իր տանն էլ նստած են երեխաներ: Նա ասաց.

— Գուհաւորաւորը խոթեցնի չէ: Մեր լեռները երբեք մեղ քաղցած չեն թողել: Հաց չը կայ,

տակարանը, որ միշտ ընդունվել է իբրեւ Գրիս- տոսի աշակերտների խմբագրած կանոններ: Հ. Տաչեան, մանրամասն քննութեան ենթարկե- լով այդ գրութեան, ինչպէս նաեւ Զակարի թուղթը և թաղեցիկ կանոնները, գտնում է, որ նրանք անվաւերական գործեր են, թարգման- ված ասորի լեզուից, փոփոխութիւնների են- թարկված և զանազան ժամանակ խմբագրված: — Հ. Տաչեանի այս մանրակրկիտ գործը կրում է իր վրա լուրջ ուսումնասիրութեան կնիք և մատչելի է, ի հարկէ, այն քննել, որոնք հե- տաքրքրվում են հախոսութեամբ: Իսկ ինչ կա- րող է հետաքրքրել մեզ, ոչ-մասնագէտ ընթեր- ցողներին, այդ այն է թէ ինչ կասեն Հայաս- տանեայց եկեղեցու պաշտպանները. լինելով քարացած հնամուտիւն նեցուկներ, որքան նրանք սիրում են յենվել հին հեղինակների վրա: Իսկ քննադատութիւնը փորձորում է այդ յենակէտերը: Ժամանակը անողը է, այն:

II

«Թանգարան հին և նոր նախնեաց.— Ա. Անկանոն գիրք հին կառավարանաց: Վենե- տիկ, 1896:

Կրօնական դարերում, երբ մարդու միտքը պաշարողը, սրտին և հոգուն կերակուր տուողը միակ թէօկրատիական այն յարմար էր, որի հայրենիքն էր Հրէաստանը, Աստուածաշունչ գրքի պատմութիւնների և աւանդութիւնների շարունակութիւններ ու յաւելումներ չարա- դրվեցան: Գրանք բարեպաշտ հաւատացեալների երեակայութեան արգասիքներն էին, որոնք տա- րածվում էին ժողովրդի մէջ, ստանում էին ա- լանդութեան ձև. մի քանի բաներ հասել են մինչև մեր ժամանակները և ժողովրդի մոտաւա- պաշտութեան ու նախապաշարմունքներին ա- ռատ նիւթ են տալիս: Ահա այդպիսի դրոյցներ և աւանդութիւններ միջնադարեան կղերը գրել է առել, իսկ XIX դարի կղերը յանձնել է տալ- զրութեան, բայց ինչ նպատակով: Երեւի, Միւլ- թարեան հայրերը ուղում են սուղադած տես- նել ամեն մի գրութեան, որ մնացել է անցեալ դարերից: Գուցէ դա ունի և իր օգուտը: Բայց մենք, ճիշդն ասած, տեսնելով այդ ստուար հա- տորը (425 երես, ութածալ), ափսոսացինք այդ գեղեցիկ տալագրութիւնը, գործ դրած աշխա- տանքը: Մեղ ցանցնում է այն, որ մինչեւ հայ ընթերցողը գիրք չունի, մասնաւոր տակից դուրս են դալիս այնպիսի աշխատութիւններ, որոնք կարող են հետաքրքրել շատ-շատ մի քա- նի տառնակահաններին: Ժամանակի պահանջ- ներից որքան շատ են յետ մնացել Եւրօպա- յում նստած Միւլթարեան հայրերը:

Լ.

Ստացանք հետեւեալ գրքերը. 1) «Ընդհանուր

որս հօ միշտ կայ: Այժմամի մասով կը պահենք մեր երեխաները: Այժմամի չը լինի, արդ շատ կայ: Իսկ եթէ արջերն էլ կոտորվին, ծառերի ճիւղերը շատ ունենան: Փորը լցնել կարելի է, արեւը: Բայց թշնամու ձեռքին նայել չէ կարելի: Նրան լսեցին:

Վարդաթամ ձիւնը զարմանալի առատութեամբ թափվեց սարերի վրա. խոթեցնի անպակելի դարձաւ: Աւաղակ ցեղը սարաւելիել ջարդ կե- րաւ և առանց յետ նայելու՝ փախաւ մինչև դաշտ:

Չմեռը երկար էր, դաժան: Խոթեցնին հաց չունէր, բայց ծիծաղը չէր հեռանում նրա բերա- նից: Երբ երեխաները լաց էին լինում, նա նըս- տում էր թէ՛ իրակի առաջ, հաւաքում էր նը- րանց իր չուրջը և պատմում էր, թէ ինչպէս էր փախչում թշնամին: Իսկ որքան այնքան առատ էր, որ կարծես երկնքից էր թափվում ձիւնի հետ:

Ահա այն ժամանակից սարեցին չէ սիրում դաշտեցուն, որովհետեւ Բղդոն գերեզմանը եր- բեք չէ լուծում: Եւ նրան լսելը լուի դուարճու- թիւն չէ: Պապերի կտակը սրբութեամբ պահելը պապերի նման լինել է նշանակում: Այդ վկա- յում է Չորագլուխ գիւղի միակ պարծանքը, Մարտի գերեզմանը: Մի բարձր ու քրտնալի բլուրի վրա, ծախի ծոցում, պառկած է Մար- տոն և պատմում է այնպիսի բան:

Հեռուոր մի վանքից խոթեցնի եկաւ մի շատ գիտուն վարդապետ: Հրաշքներ էին պատմում նրա խելքի մասին: Ասում էին, որ նա գիտէ, թէ ինչ կայ երկնքում և ինչեր են ծածկված հողի տակ: Մարաթուկի հին ու խաբիւղ վան-

քանկ նիւթոց յիսնամայ Բազմավիպաց, 1843— 1893: Վենետիկ, 1896: 2) «Փոքրիկ դրոյց- ներ», կազմեց (!) Գեորգ Բաբուրեանց. Թիֆ- լիս, 1896. 32 երես, գինը 10 կօպէկ:

ՆԱՄԱԿ ՄԵՇՂԱՐԱՔԻԼԻՍՈՒՅԻՑ

Հօկտեմբերի 30-ին

Այն տխուր երեւոյթը, որ նկատելի է ամեն տեղ հայոց կեանքում, դժբաղդաբար կրկնվում է և մեզանում: Խօսքս քահանայական հարցի մասին է: Երեւի դեռ երկար ժամանակ հայ հա- տարակութիւնը խաղաղիկ կը լինի բաղդախնդի- ների ձեռքում: Մի ոմն, մեր գլխաւոր տանու- սէրի բացակայութեան հէնց երկրորդ օրը, իր արքանեակներից մէկի ձեռքը մի խնդրագիր տալով, որպէս ընդհանուր, հասարակական ժո- դովի արդիւնք, որ տեղի չէ ունեցել, դադարա- գողի պատեցնում է ամբողջ գիւղը և բազմա- թիւ ստորագրութիւններով զարդարում: Գիւղը, որ անապահով է, երեք քահանայ ունի. և միթէ այդ թիւը բաւական չէ 400 տան հոգեւոր պի- տոյքները կատարելու համար: Ներկայ, արդիւն- քի կողմից, աննպատակ հանգամանքներում, իւ- րաքանիւր քահանայ իսկապէս 200 ծուխ պէտք է ունենայ, և սա դժուար հասկանալու խնդիր չէ, եթէ միայն կամաւորապէս կոյր չենք կանե- նում ձեռնալ: Ո՞վ մտածեց, ո՞վ բարձրացրեց չորրորդ քահանայ, ունենալու հարցը, համարձակ կարելի է ասել, որ ծխականներից ոչ ոք: Այդ հարցը բարձրացնողը, զրանով հետաքրքրվող միմիայն ճարպիկ, խորամանկ արհացուն է, որ նախապէս վազաւորով լէ՛ծածին և նախօրոք պատրաստած ունենալով խնդրագիրը, յարմար րօպէի էր սպասում ստորագրելու տալու: Վերջա- պէս, այդ բաղդաւոր րօպէն նա գտաւ գլխաւոր տանուսէրի բացակայութեան ժամանակ:

Ժողովուրդը լաւ գիտէ, որ իր քահանաները նիւթապէս անապահով դրութեան մէջ են, այն էլ լաւ գիտէ, թէ որքան անպարտաճանաչ են իրանք ծխականները արդիւնքի վերաբերմամբ. հաւաքա- հախա անուանված գլխաւոր արդիւնքը անուանով միայն գոյութիւն ունի... Բայց, չը նայելով զրան, եթէ վաղը մի երկրորդ բաղդախնդի, որ աջողութիւն չը գտնելով կեանքի այլ և այլ աւ- պարէզներում, իր խնդրագրով դիմէ ժողովրդին, հաւատացած ենք, որ առանց մի րօպէ անգամ տառանվելու, առանց խղճահարկելու, առանց կարմրելու իր ստորագրութիւններով դարձեալ կը զարդարի այդ անպատուաբեր, խայտառակ թիւթը և մազալափ անգամ չի զգայ այն վերա- ւորանքի չափը, որ հասցնում է իր քահանանե- րին, որոնց համապատասխան, պարտաճանաչ և բարեխիղճ է ճանաչում իրանց պաշտօններում: Ահա վարձատրութիւն այն քահանային, որ 35

ըր, որ խոթի ամենաբարձր գագաթի մի ժայ- ոտու ուսի վրա էր չինված, նրա ճգնութեան տեղը դարձաւ Բայց նա աշխատէ անող անա- պատական չէր. իր հետ բերել էր թուղթ, գրելի, թանաք,— իրեր, որոնք խոթում տեսնված բա- ներ չէին: ձիւն է, մի քանի հատ գրքեր կային լեռնային փոքրիկ եկեղեցիներում, բայց զրանք սրբութիւններ էին, որոնց բաց անելը մեղք էր: համարում նոյն իսկ տէրտէքները: Սրանք ան- գիր գիտէին մի քանի աղօթքներ և սուրբ զըր- քերը ձեռքում բռնած՝ կատարում էին ծէսեր, բայց երբ վեցնում էին իրանց փիլոսոփանքը, դառնում էին նոյն սարեցին:

Գիտնական վարդապետը քարոզներ խօսեց, հասկացրեց որ մարդը անասուն է, եթէ չունի ուսում և գիտութիւն: Խոթել հաւատաց. վար- դապետը վանքում դպրոց բացեց: Հրաշք այն էր, որ խոթեցնի երկրասարդը հաց և գիրք վերցրած՝ բարձրանում էր սարի թեք լանջով և չըքում էր վարդապետի առաջ: Բայց այդ հրաշ- քը շատ կարճատև էր:

Սարերում տարածվեց մի խորհրդաւոր չչուկ: Միմիայն ասում էին. «Գաշտի հոտ է փչում»: Ինչ էր այդ հոտը: Ժողովուրդը սովոր չէր դը- րան. վարդապետը աշխատում էր, որ սարեցին արջ չը մնայ: Պապերի գերեզմանները լուել էին. նրանց տեղ խօսում էին օտար, անծանօթ պապեր, որոնք քարոզում էին հանդարտ ու խեղճ մնալ:

Շուրջ գնալով սաստկանում էր: Եւ մի օր գիւղերից մարդիկ գնացին Չորագլուխ: Մրտօն նրանց տարաւ իր կալը: Երկար խօսեցին և վեր- ջը կանգ առան այս խօսքերի վրա.

տարի հաւատարմութեամբ և ջերմեանդու-
թեամբ ծառայել է մեր եկեղեցուն և դպրոց-
ներին, որ հոգեւոր բարձր իշխանութեան ուշա-
դրութեան արժանացած է 20 տարւոյ գործա-
կալական անշահաւէր գործունէութեամբ: Ասում
են, որ հայր վարձատրել չը գիտէ իր վաստա-
կաւորներին: Սրանից էլ լաւ կենսաթոշակ: Ու
զորմէն ժողովուրդ, երբ պէտք է հասկանաւ, որ
եկեղեցու բարեգործութիւնը քահանաների թիւը
աւելացնելու մէջ չէ կայանում:

Ղարաբերիսեցի

ՆԱՍԱԿ ՇՈՒԱԿԵՐԻՑ

Հոկտեմբերի 30-ին

Անկարելի է երեւակայել մեր գիւղի ներկայ
վիճակը. կատարեալ տնտեսութիւն և մեծ յու-
սահատութիւն է տրուում այստեղ: Երբեք մեծ
մասը լինելով հողագործ և այգեգործ՝ տարեկան
ապրուստի միջոցները արտ ու այգուց էր սպա-
սում, բայց այս տարի շարունակ անձրեւ-
ներից բոլորը փչացան: Արտերը անձրեւե-
րից ու կարկտից փչացան, իսկ այգիները
թողից ու «կարմրուկ» հիւանդութիւնից: Բը-
նութեան այդ չար խաղերի դէմ ինչ կա-
րող է անել խեղճ գիւղացին: Ձեռքերը ծաւա-
մնացել է տարակուսած, մոլորված, չը գիտէ
իր ամենամահաբաժնի ծախսերը—կարիքները
հողալու համար ուր դիմէ, ունից խնդրէ օգնու-
թիւն. երկի կը գնայ վախճառու պարտատե-
րերի մօտ՝ նորից պարտք վերցնելու և «առա-
պելական» մուրհակները նորից ընդարձակելու:

Նրանցայեցէք, աշուն է, հոկտեմբեր ամիսը.
դեռ գիւղացու ցորենի հաշանն էր (գարին
նոր է վերջացել) կալի կենտրոնում դիպցած
մնում են անկասիւ... Գիւղացու սիրտը կոտ-
րած է, աչքը վախեցած, նա մինչև անգամ չէ
ուզում կալ կասել, որովհետեւ հարկւարու խուր-
ձերից հաղիւ 20—25 խան հատիկ ցորեն է
ստացվում, որ նշանակում է անցեալ առատ տա-
րիներէջ տասն անգամ պակաս: Այդ դեռ ոչինչ
չայցեցէք այգիներին, չորայել են բոլորը. մարդ
ակամայ չէ ուզում տեսնել, որպէս զի արտա-
սուք չը թափի: Ուրբան զանազանութիւն ան-
ցեալ տարիներին և ներկայ տարւոյ մէջ: Հազար
թւանգի գինի մզողը՝ այժմ 50 թւանգի հաղիւ է
վերցնում: Մի քիչ միլիթարական է գիւղացու հա-
մար, որ գինին լաւ մազանդա ունի, թուղին,
ընթացիկ հաղիւ, 80 կոպէկ: Սակայն այդ մի-
լիթարութիւնը առ երեւոյթ է լինում, որովհետեւ
չունեն այնքան, որ կարողանային իրանց ցաւե-
րը հոգալ... Արեւունական թ ու ջին—հարկ հա-
ւաքելը սկսվել է:

Այստեղ արդէն հիւրը զրկեց ուսաց տարրա-

—Խեղճ բանում մենք խօսել չենք կարող:
Բայց եթէ լաւ վարդապետի ասածն է, թող մի
փորձ անենք:

Փորձը յանձնվեց Մարտոսին:

Մի օր գիտնական վարդապետը Զորապետի
էր եկել: Կարծես դիտմամբ նրան այնքան ու-
շացրին, որ աշնանային կարճ օրը մթնեց. վրա
հասաւ մի սարսափելի միթութիւն, որի պակասը
լրացնում էր թանձր մշուշը: Երբ վարդապետը
յայտնեց, թէ կը կամենար իր վաճառ գնալ, ոչ
որ չը խնդրեց մնալ: Ընդհակառակը, մի խումբ
երիտասարդներ, որոնց մէջ կային և նրա աշա-
կերտները, պատրաստութիւն յայտնեցին ուղեկ-
ցել նրան մինչև տուն:

Զորապետը մի հատիկ ճանապարհ ունէր, որ
անցնում էր խոր ձորի միջով: Միայն լեռնակա-
նի ջրերն կարող էր իմանալ, թէ ուր և ինչպէս
է գնում այդպիսի մի մոլոր ժամանակ: Յաճ-
րում, մի ինչ որ անյայտ, կորած տեղ, բարկա-
ցած վշտում էր գետակը, ճանապարհը կամ մօ-
տենում էր նրան, կամ հեռանում, և ամեն ժա-
մանակ, երբ ջրերն էր իրանց ամբակներով
ճանկում էին միապաղաղ ջրերը, որոնց վրա-
յով անցնում էր ճանապարհը, վարդապետը ճը-
րամայում էր իր հետեւորդներին որ չը հեռա-
նան իրանից. նա չէր կարողանում ծածկել իր
երկիւղը, անիծում էր ճանապարհը, իւրաքան-
չիւր մի նոր լավագ ձայնի մասին հարց ու փորձ
էր անում: Երկար այդպէս խաբրափում էին,
իսկ ձորը կարծես գնալով խորանում էր և
մոլոր թանձրանում: Յանկարծ առջին գնացող
երիտասարդը կանգնեց և ձայն տուեց: Պատաս-
խանի տեղ բարձրից լավեց հրացանի ձայն, որ

կան դպրոցի՝ հրահանգութեամբ այգեգործական
դպրոցներին վերատեսուէ թողանալի:

Գ. Բալասանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Այսօր բաց ենք անում «Մշակի» 1897 թ.ի
բաժանորդագրութիւնը: Մանրամասնութիւնները
մեր ընթերցողները կարող են տեսնել «Մշա-
կի» առաջին երեսի վրա, իսկ մեզ առկա
յայտարարութեան մէջ: Հետեւ համարի հետ,
ինչպէս ամեն տարի, այս տարի էլ կուղար-
կենք մեր բաժանորդներին տպագրած նա-
մակներ և ծրարներ:

Բաց անելով «Մշակի» 1897 թ.ի բաժանոր-
դագրութիւնը, վերջին անգամ խնդրում
ենք մեր բաժանորդներին նրանց, որոնց վրա
ապաւորվեցին կան, որ բարեհաճեն շուտով այդ
ապաւորվելը հասցնել խմբագրութեան:

«Մշակի» այս համարը բաղկացած է թերթ ու
կէսից:

Մեզ հետ միասին, «Новое Обозрѣніе» լրա-
գիրն էլ չնշտեց այն փաստի վրա, որ Կ. Պօլսի
նոր պատրիարք Օրմանեան եպիսկոպոսը իր
հայեացքներով համարվում է նախկին պատ-
րիարք Ալեքեանի կողմնակից, որի կաթողիկո-
սական թեկնածութիւնը նա ջերմ կերպով
պաշտպանեց 1892 թ.ի ընտրութեան ժամա-
նակ: Հայոց «Արձագանք» լրագիրը գովասան-
քով է խօսում Օրմանեանի մասին: Պէտք է խոս-
տովանենք, որ այս դէպքում «Արձագանք» ցոյց
տուեց լոգիական հետեւողականութիւն. Ալեքեանի
ջերմ պաշտպանը և համակողմը, ի հարկէ, պէտք
է համակրի և Օրմանեանին, իբրեւ Ալեքեանի
հետեւորդին և գործակցին... Տեսնե՛ք ինչ ցոյց կը
տալ ապագան:

Յայտնում ենք մեր կատարեալ ուրախութիւ-
նը, որ Բարթողիմէոս եպիսկոպոս Չամչեան
հեռացաւ պատրիարքական ասպարէզից, ոչինչ
հեռք չը թողնելով ապօրինի կերպով ձեռք
գցած աթոռի վրա... Նրա տեղապահութիւնից
ոչինչ չը մնաց, բայց եթէ մի քանի ամօթալի
ճառեր և չըբաբերականներ...

Մենք արդէն հաղորդեցինք, որ «Петербург-
skia Bѣdomosti» լրագիրը, որի խմբագիրն է իշ-
խան Ուստոմսկի, տպագրել է Ուստոմսկիսեան
դուբի հրաւերը՝ թիւրքաց հայերին դրամական
օգնութիւն ցոյց տալու մասին: Այժմ «Новое
Обозрѣніе» լրագիրը հաղորդում է, որ «Пет. Вѣдо-

անաւոր արձագանք տուեց ձորի ժայռերի մէջ:
Մի քանի կարճ խօսքով երիտասարդները
հասկացրին վարդապետին, որ տարվալ այս ժա-
մանակ շատ են պատահում ընդհարումներ սա-
րի միւս կողմում աղբոյ վրանաբանների հետ,
որոնք գալիս են կամ մի քան խելու, կամ թէ
մի հին վրէժ հանելու համար:

Այդ ասելով, երիտասարդները սկսեցին պատ-
րաստել իրանց զէնքերը: Բայց վարդապետն ա-
սեց, որ չարից պէտք է հեռանալ. նա խնդրեց
յես դառնալ: Այդ խօսքը իսկոյն կատարվեց:
Նորից որոտաց հրացանը և այս անգամ՝ չփոթ-
ված խմբի գլխի վրա: Աւագակները հասնում
էին:

—Փախչէ՛ք, հնալով կանչում էր վարդապետը
և շտապեցնում էր իր մարդկանց:

Մի սաստիկ իրարանցում տեղի ունեցաւ: Բայց
փախչելը հեշտ չէր. ճանապարհը չէր թոյլ տա-
լիս արագ շարժվել: Մի անկմարթում աւազակ-
ներն առաջ անցան. նրանցից մէկը սկսեց հայ-
հոյել խուճեցիներին, ասեց որ նրանք տղա-
մարդ չեն, այլ լալկան կանայք: Այս առաջար-
կեց անձնատուր լինել բոլոր զէնքերով, թէ չէ՝
ամենքը կը մորթվեն հաւի պէս: Խուճեցի երի-
տասարդները առաջին վայրկեանում կատաղեցին.
բայց առանց վարդապետի հրամանի ոչինչ չու-
ղեցին անել: Մէկը հասկացրեց, որ մի թեթիւ
կոխ է հարկաւոր: Վարդապետը, որ առանց
այդ էլ հաղիւ էր կարողանում չունչ ըսել, նա-
րից կրկնեց, որ չարին յաղթել կարելի է հեղու-
թեամբ և խաղաղութեամբ: Մի անկմարթում
երիտասարդները իրանց բոլոր զէնքերը յանձնե-
ցին աւազակներին, որոնք շարունակում էին

МОСТИ» արդէն հանգանակութիւն է բաց արել
իր էջերի մէջ՝ յօդուտ հայերի, ինչպէս և սովա-
տանջ հնդկներին: Այդ մարդասիրական քայլը
պատիւ է բերում ուսու լրագրին:

Մեզ հաղորդում են, որ հայ դերասանների
ընկերութիւնը, հոկտեմբերի 14-ին, հինգշաբթի
օր, պէտք է ներկայացնի «Սմբատ I» պատմա-
կան ողբերգութիւնը, ի նպաստ դերասան Ա.
Յարութիւնեանի:

«Петербург. Вѣдомости» լրագիրը հաղորդելով
Թիֆլիսի լրագիրների այն լուրը, թէ Կարս ե-
կած թիւրքահայ գաղթականները բերել են ի-
րանց հետ զանազան վարակիչ հիւանդութիւն-
ներ և այդ պատճառով տեղական վարչութիւնը
մտադիր է հարց յարուցանել, որ արգելի նոր
գաղթականների մուտքը Ռուսաստան, աւելաց-
նում է իր կողմից. «Միթէ կարելի է ենթա-
դրել, որ այդ թշուառ մարդկանց նորից կը քը-
չեն դէպի անխուսափելի մահը, վերադարձնելով
Թիւրքիա»:

Դեռ չը պտորված «Աղբիւրի» պատրիար-
քական զատարկաբանութիւնների լաբիրինթոսի
մէջ այս անգամ հաղիւ գտանք մի հետաքրքրա-
կան տեղեկութիւն Երուսաղէմից, որ ուրախու-
թեամբ արտասուում ենք. «Աղբիւրների» 26-ին,
գրում է թղթակցը, Պօլսէն մեկնեցայ դէպի
այս կողմը. ինձ հետ կային մի և նոյն չոգենա-
ւով երկու պաշտօնեայ, մին ծայտեալ, միւսը իր
համազգեստով, աստիճան ինձ հետ ընկերացան
մինչև Երուսաղէմ. 16 օրէն յետոյ հասանք Երու-
սաղէմ: Տան օր է, որ աստ եմ. Երուսաղէմի ս.
Յակոբեանց վանուց պատրիարքը և միաբանու-
թիւնը միջակ վարմունք մը ունին դէպի մեզ.
Ինձ տուած են մի ներքնայայլ անշուք սենեակ:
Միաբանութիւնը կը զոռչանայ, որպէս զի իբր
ջերմ աղագաւթը չը վտանգուին Աթոռին շահերը.
անոր համար պաղ կը վարուն աքտորեալներու
հետ (որոնց թուումն է և Ներսէս վարդապետ
Խաբաթեան), աւելի քան ինչ որ կը յուսաց-
էր: Այստեղ միմիայն ես բախտ ունիմ ամեն
օր առաւօտ և երեկոյ վայելել ընդհանուր աղ-
գին սիրելի խղճիկեան Մատթէոս սրբազանի և
Կարնոյ առաջնորդ Ղևոնդ եպիսկոպոս Շիճա-
նեանի տեսութիւնը: Կը գտնուին միաբանու-
թեան մէջ քանի մը աղինւ անձնաւորութիւն-
ներ, ընդ որս և Յարութիւն պատրիարքը, որը
յարգանքը կը վերաբերուին դէպի մեծ վարան-
դին: Մատթէոս սրբազանը այստեղ ընդունած
է Անգլիոյ և Ֆրանսիոյ հիւպատոսաց այցելու-
թիւնը»:

անխնայ հայոյել խուճեցիներին: Իսկ վարդա-
պետը խնդրում էր, որ իրանց խնայեն:

Գերբերին տարան Զորապետի, պահեցին մի
այրի մէջ: Միայն առաւօտեան հասկացաւ վար-
դապետը, թէ այդ ինչ բան էր: Գիւղամէջում
մարդիկ հաւաքվեցին: Մարտոս, գիւղի գլխաւո-
րը, մի մի պատմեց, թէ ինչեւ արաւ ինքը այդ
գիւղը: Չը մոռացաւ և ոչ մի խօսք իր հայհո-
յանքներից: Մարտոսի տարածվեց լսողների վրա:
Մի երկուրդ փախցանք, որ պէտք է այդ վախ-
կոտ մարդուն ժայռից ցած գցել: Բայց Մարտո-
սը գիտէր, թէ ինչ պէտք է անել: Վերջը նա ասեց.

—Քո խելը մեծ է: Բայց խուճեցին, վար-
դապետ, չէ հասկանում, թէ այդ ինչ զարմանա-
լի խել է, որ ինչ հոգի երեք մարդու ձեռքն
ընկնի: Մէկը հայոյել խուճեցուն, կին անուա-
նէ նրան, և անպատիժ մնայ... Գու մեզ կը
փչացնեն, վարդապետ: Այսօրվանից մի հատ
սարեցին տղայ չի չորի քո առաջ, որ ընդանից
բան սովորի: Մենք տէրեքներն ունենք. ճշմա-
րիտ է, ինչպէս դու ես ասում, մեզ պէս արջեր
են, բայց այս սարերում դու չես գտնի մի հատ
տէրեք, որ ինչ հոգով մի ամբողջ գիւղի կու-
չանէ հարիւր մարդկանց դէմ:

Բոլոր գիւղացիները հաստատեցին Մարտո-
սի խօսքերը: Իսկ վարդապետն աշխատում էր հաս-
կացնել, որ հոգեւորական մարդու գործը բոլորու-
վին ուրիշ և, բայց այդ խօսքերը չընդունվեցին,
և Մարտոս շարունակեց.

—Մենք մեզ հետ կուի չենք տանում
մեր խեղճերին, անդամալոյծներին: Եթէ սիրում
ես մեր սարերը, մնացիւր այստեղ: Աստուծու
խեղճին մենք դէն չենք գցում. հաց տալիս ենք,

Կ. Պօլսի լրագիրներում կարդում ենք, «Հինգ-
շաբթի 1000-ի չափ գաղթականը Ռուսիայէ
մայրաքաղաքս եկան, և հետզհետէ Անատոլի
կողմերը զրկուեցան: Ինչպէս երևում է, դը-
րանք մահ մահ տակաւն են լին, որոնք մեծ ե-
ռանդով փոխադրվում են դէպի Անատոլիա,
յատկապէս թիւրքաց Հայաստան:

Պետերբուրգում նորերս յանկարծամահ ե-
ղած հայադղի զենեակալ Ալեքսանդրի մարմինը
այսօր, ժամը 12 1/2-ին կը հասնի երկաթուղու
կայարանը, որտեղից փոխադրվում վանքի մայր
եկեղեցին, կը թաղվի նրա բակում, կաթողիկո-
սի թոյլտուութեամբ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են. «Այստեղի հայ
ուսանողութիւնը վճել է այս տարի սովորա-
կան երեկոյթ չը տալ և արդէն դիմել է Պե-
տերբուրգի և Կովկասի հայերին օգնել իրանց
նպաստներով չեւոր ուսանողներին»:

ՆԵՐՔԻՆ մեզ գրում են. «Թիֆլիսի դերա-
սանուհիներ Ֆելէկեան քայրերը տուեցին իրանց
վերջին, չորրորդ ներկայացումը: Խաղացին «Սիւ-
զան և Խմբէր» պիէսան: Մուտքի մի երրորդ
մասը յատկացրած է թեմական դպրոցին: Սի-
րողներ խումբը պատրաստվում է ներկայացնել
«Բուզան» պիէսան: յօդուտ Բարեգործական ըն-
կերութեան տեղական ճիւղին»:

ՆԵՐՔԻՆ մեզ հաղորդում են. «Բարեգոր-
ծական ընկերութեան տեղական ճիւղը շարու-
նակում է գաղթականներին ճաշ տալ, օրական
60—70 հոգու»:

ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՎԵՐՁԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՆՆԵՐ

Այժմ տապալված Բարթողիմէոս Չամչեա-
նի օրգան «Փռնի» մէջ կարդում ենք, «Կէ-
սարիոյ առաջնորդ Տրդատ վարդապետի, և
Էլէքէի, Ֆելէսի ու Տէվլիի եկեղեցեաց խորհր-
դոց ու աւագ քահանայից կողմանէ՝ պատրիար-
քաւանի ու Լնգաբէի կուսակալութեան ուղղեալ
հեռագրովը, խուճարարութեանց համար՝ խորին
ցաւ, օսմանեան պետութեան դարաւոր հովա-
նաւորութեան ու չորսորդ համար՝ երախտադի-
տական զգացումն, և Բարթողիմէոս արքեպիս-
կոպոսի ի պատրիարքական տեղապահութիւն
կոչուելուն համար չնորհակալութիւն (?) յայտ-
նուած է»:

Պ. Գ.—սկի, որը գործերով յաճախ լինում է

պահպանում ենք. ոչ ոք չէ կարող նրան նեղաց-
նել: Գու էլ մեր խեղճն ես:

Վարդապետը այդ վիճակը չընդունեց և ճա-
նապարհվեց մի քանի օրից յետոյ: Նրա ետեւից
գնում էին բազմաթիւ մարդիկ: Մարտոս առաջ-
նորդում էր նրանց և ոչինչ չէր խօսում: Երբ
կածանք բաւական ցած գնաց, Մարտոս կանգ
առաւ: Այժմ միայն խօսեց նա.

—Այս քարից դէնը մեր երկիրը է:

Եւ ձեռքը ուղղելով դէպի սարերը, նա շարու-
նակեց.

—Գիտես ինչ հեղեղներ են տեսնում այս
սարերը: Լինում է ժամանակ, սրանից էլ մեծ
ժայռեր են պոկում ջրերը և ցած են տանում
իրանց հետ: Եթէ Աստուծոյ մի օր բարկանայ
մեզ վրա, և հեղեղները տանեն այն գերեզման-
ները, որոնց մէջ մեր պապերն են ննջում, ինչ
կանի խուճը: Նոյն օրը նա ցած կը գործվի ան-
դունդներ մէջ. և չի լինի մէկը, որ կամենայ
մնալ, ապրել առանց իր պապերի: Ներքեցի,
դաշտի կողմից եկող ամեն մի նոր մարդ, հաս-
նելով այս մեծ քարին, որ մեր սահմանն է, պի-
տի կանգ առնէ և այս բանն իմանայ ու ապա
շարունակէ իր ճանապարհը: Գու չը հասկացար,
վարդապետ: Քեզ բարի ճանապարհ:

Բոլոր սարեցիները համբուրեցին վարդապետի
ձեռքը, բարի ճանապարհ մաղթեցին: Իսկ Մար-
տոս այդ խօսքերի համար արժանացաւ խուճի
նուիրական գերեզմաններից մէկին:

(Կը շարունակվի)

Կ. Պոլսում, ասում է «Одесская Новості» լրագրի, հաղորդեց մեզ մի քանի հետաքրքիր տարածվածություններ: Նկարագրելով մեզ արդեն յայտնի դադանությունները թիւրքաց մայրաքաղաքում, պ. Գ.—սկի ասեց.

—Խնչքան էլ աշխատեն հաւատացնել մեզ, թէ օսմանեան կայսրութեան մայրաքաղաքում և գաւառներում «ամեն քան հանդիստ է», բայց մենք բարոյական իրաւունքը չունենք նոյնը ասել:

—Խնչքան:

—Խնչքան իրան հասկանալի է, որ հանդուստութիւն չէ կարելի անուանել այն, երբ զինուորները վրաստան են փողոցներում և ահ ու սարսափ են տարածում խաղաղ բնակիչներին վրա. դա այն հանդուստութիւնը չէ, որը պէտք է թաղաւորէր թիւրքերէն ըստնեւորդ դարի չէմբում: Հայերը ընթերցումներ էին պահանջում, կամ աւելի պարզ ասած՝ իրանց զրուական բարոյքուն, թէպէտ նրանք զարման «նպատակ ունէին» աւելի հեռու գնալ, ամեն տեսակ արտօնութիւններ ձեռք բերել, մինչև որ կը կարողանային ինքնավարութիւն ստանալ... Նրանք այն ճանապարհով չը գնացին, որով ձեռք է բերվում ազգային անկախութիւնը: Դա աննպատակ յուզմունք է, դա ուսուցիչ է: Պետութիւնները իրանց ձեռքիցն են կաշկռում անուան են հանգստութիւնը վերականգնելու համար: Խոստացված ընթերցումները մօտ են իրադրման, բայց նիւթական միջոցները պակասութեան պատճառով նրանք չեն մտցնում: Այդ հանգամանքի հետքով ամբողջ երկրը լարված դրութեան մէջ է: Կառավարութիւնն ևս ամեն քան աշխատում է ձգձգել, այնպէս որ, ամենաչնչին բարենորոգութիւն մտցնելու համար անգամ օտարի աղիւցեութիւնն է հարկաւոր:

—Ասեցէք, ինչպէս վարվեցին վախճան, բայց յուզման մէջ ոչինչ մասնակցութիւն չունեցած հայերի գոյրերի հետ:

—Սովորաբար մի չըջաբերական հրատարակեց, որով յայտարարվում էր, թէ վախճան և իրանց շարժական ու անշարժ կառաւարները թողած հայերը կարող են իրանց կառաւարներին տիրանալ չըջաբերականի երևալու բոլորէն 20 օրվայ ընթացքում: Հասերը վերադարձան, բայց շատ կարճ ժամանակամիջոց անցնելուց յետոյ կառաւարներն արդէն զանաւարանի սեփականութիւն էին դարձել: Գժգոհ հայերը դիմեցին պետութիւնների ներկայացուցիչներին խնդրելով՝ արգելել թիւրքաց կառավարութեանը սեփականացնել իրանց կառավարները: Հայերին բաւարարութիւն տրվեց և, ինչպէս ինձ հաղորդեցին, այդ հարցը չուսում քննութեան կենթարկվի:

—Սկզբից արդեօք նախկին առևտրական շարժումը Կ. Պոլսում:

—Ամենին ոչ: Նախկին առևտրական գործունեութեան մասին միմիայն խորթելի յիշողութիւն է մնացել: Առևտրականներ չը կան: Նրանք վախճան, իսկ մնացածներն էլ չեն վստահանում մի քան անել, ամեն ինչ մեծ եւային դրութեան մէջ է:

«Tamps» լրագիրը հաղորդում է, որ սպասածի հակառակ, հայոց ազգային ժողովը, որը պէտք է խառն ժողովի անգամներ նշանակել, թշնամաբար վերաբերվեց Նուրեանի կուսակցութեանը, որը պահանջում է սահմանադրութեան վերաքննութիւնը: Ինքն Նուրեան էֆէնդին և պատրիք-գայմազամ Բարդուղիմէոս միայն երեք ձայն ստացան և այդ պատճառով չընտրվեցին խառն ժողովի անդամ: Յաջմութիւնը տարան Արթին-փաշան և Գաբրիէլ էֆէնդին, որոնք սնդում էին պատրիարք ընտրել և պաշտպանում են խաղաղացման քաղաքականութիւնը:

Թիւրքաց գործերը քննելու համար միջազգային կոնֆերանսի գումարելու լուրերը գնալով տարածվում են: «Köln. Zeitung» լրագիրը հաւատացնում է մինչև անգամ, որ կոնֆերանսի կը գումարվի Պետերբուրգում: Միւս կողմից «Nord» լրագիրը անպայման չէ հերքում այդ լուրը, այլ ասում է միայն, որ դա վաղաժամ է, որովհետև դեռ ևս ոչինչ լինի չէ կայացել ոչ կոնֆերանսի գումարելու վերաբերմամբ, և ոչ էլ այն տեղի մասին, որ պէտք է կայանայ կոնֆերանսին: Այն ինչ այդ ժամանակամիջոցում համարեալ ըստ ղեկավարները հեռացան Կ. Պոլսից: Մանաւանդ հետաքրքրում է արևմտեան եւրոպական մամուլին Նիւդիզովի Պետերբուրգ զբնակում:

«Times» լրագիրը հաղորդում է, որ նոյեմբերի 11-ին (նոր օտարով) թիւրքաց լրագիրներում ազգային կառավարական հաղորդագրութիւն, որի մէջ լեւած են այն բոլոր ընթերցանները, որոնց մտցնելը Բ. Գուրը խոտաացաւ դեռ անցեալ տարի: Նահանգական իշխանութիւններին հրաւանագիրներ են ուղարկվում՝ անցյալով մտցնել այդ ընթերցանները:

Գերմանական մամուլը, խօսելով լորդ Սօլըս-րիւրիի ճառի մասին, հեղուում է այդ ճառի չափազանց համեստութիւնը, մի ճառ, որը ուղղակի հակասում է նրա անցեալ տարվայ տասն ճառին: Մի քանի լրագիրներ ուղղակի համարում են այդ ճառը Անգլիայի անգորութեան խոստովանութիւն: «Kreuzzeitung» ասում է, որ ոչ ոք չի հարկէ, չի համաձայնի բարեկամանալ Անգլիայի հետ, առանց լուրջ երաշխաւորութիւնների և Անգլիայի խնամարարութիւնը ներկայ դէպքում, ի հարկէ, պայմանաւորված է նրանով, որ նա խոստովանում է իր առանձնացած դրութիւնը: «Berliner Tageblatt» այդ առիթով նկատում է. «Յուսանք, որ անգլիական պատերազմական ոյժերի պակասութիւնը և իր պահանջները պաշտպանելու անգորութիւնը կը ստիպեն Անգլիային զիջումատրական աւելի զոյճ քայլեր անել, ինչ որ վայել է նրան իր դրութեան ներկայ պայմաններում»:

«Frankfurter Zeitung» Կ. Պոլսից ասացած հետեւեալ տեղեկութիւնը ազգային «Յրանսխական» ղեկավարի ունեւորութիւնը սուլմանի մօտ անուսկուր երկար տեղեց, ոչ պակաս երեք ժամից: Գետալանի խօսակցութիւնը սուլմանի հետ զխառնապէս թիւրքաց ֆինանսներին վերակազմութեան հարցին էր վերաբերում: Գիւլումատրական շրջաններում, սակայն, կարծում են, որ Յրանսխական առաջարկած ֆինանսական բարենորոգութեան ծրագիրը շատ ընդարձակ է և շատ զեթաւոր, և այդ պատճառով Բ. Գուրը չէր կարող համաձայնվել և ընդունել այդ ծրագիրը: Ուստի սուլմանն էլ, չը նայելով կամքին պնդումներին, հրաւարվեց որ և է պաշտօնական խոստումներ տալ այդ քանի առիթով և միայն խոտաացաւ լուրջ քննադատութեան ենթարկել այդ ծրագիրը: Թիւրքերի առաջարկած նոր փոխառութիւնները այն դէպքում, եթէ նա կընդունի պետութիւնների ծրագիրը, նախադրված է 15 միլիոն ֆունտ: Ինքն իրան հասկանալի է, որ պետութիւնները իրանց կողմից ոչինչ ուղղակի պարտաւորութիւններ չեն յանձն առնի այդ փոխառութիւնը երաշխաւորելու համար»:

Յրանսխական արտաքին գործերի մինիստրը հաղորդեց իր ընկեր մինիստրներին, թէ Պարիզի թիւրքաց ղեկավարը գրաւոր կերպով տեղեկութիւն տուեց իրան հայերի վերաբերմամբ Բ. Գրանն ձեռք առած միջոցների և այդ միջոցների հետեւանքների մասին: Այդ տեղեկութիւնից երևում է, որ մասնատակաւ և ոչ-մասնատակաւ դաւանութեան 1900 անձինքներից, որոնք կաւանաւորված էին Կ. Պոլսի վերջին խառնակութիւնների ժամանակ, 1800 հոգի արձակված են, 60 անձինք դատի են ենթարկված և զանազան պատիժների են դատաւարտված, իսկ մնացած 40 անձինք, որոնք դեռ ևս բանտում են գտնվում, այս օրերս դատարան կը կանչվեն: Մի քանի ժամանակից յետոյ Ֆրանսիական արտաքին գործերի մինիստրին կը հաղորդվի նահանգներում ձեռք առած միջոցների հետեւանքների մասին:

Բացի այդ բոլորից, Հանտօֆին հաղորդված է այն հրահանգների բնագիրը, որ ուղարկված է նահանգների վաղինքին ապագայում խառնակութիւնների առաջն առնելու և պատասխանատուութեան ենթարկելու համար պաշտօնեաներին, առանց նայելու նրանց աստիճանին: Գրանն միապէս Հանտօս յայտնեց մինիստրների խորհրդին, որ եւրոպական պետութիւններին և Բ. Գրանն մէջ չարունակվում են բանակցութիւնները, և շատ եռանդով կերպով, խոտաացված ընթերցանները մտցնելու մասին:

Վիէնայի «Polit. Correspondenz» լրագիրը մէջ տալով նոտաները Հայաստանից շատ մեծապէս գոյնեղ են նկարագրում Փորը-Ստիպի նահանգների վիճակը: Չը նայելով որ բերքը համեմատաբար լաւ է եղել, շատ տեղերում կարիք այնքան մեծ է, որ գիւղական ազգաբնակչու-

թեան քաշած տառապանքների պատճառով, շատ զիւղերում վարակիչ հիւանդութիւններ են երևացել, որոնք մեծ զոհեր են տանում: Թիւրքաց գաւառական իշխանութիւնները ոչ մի ուշադրութիւն չեն դարձնում սովատանջների անօդական վիճակի վրա և շարունակում են նըրանց հալածել, ինչով նրանցից վերջին գոյքը՝ ազատիկ հարկերի հաշին:

«Frankfurter Zeitung» լրագիր Կ. Պոլսի թըրթակիցը հետեւեալ մանրամասնութիւններն է հաղորդում Կեսարիայի վիլայէթի Լիւբիկ քաղաքում նորերս տեղի ունեցած անկարգութիւնների մասին: Այդ անկարգութիւնները ծագեցին հոկտեմբերի 26-ին: Հայերը, որոնց համբերութիւնը կարելի էր անթիւ հալածանքներից, յարձակվեցին մի մեծ մզկիթի վրա և սկսեցին ուսմբեր նետել թիւրք ժողովրդի մէջ: Այն ժամանակ Լիւբիկի և չըջալայ տեղերի թիւրք բնակիչները ևս յարձակվեցին հայերի վըրա: Գազանութիւնների ժամանակ սպանվեցին 3000 հայ և մօտ 200 թիւրք: Թիւրքաց զօրքը շատ ոչ հասաւ և միջամտեց գործին միայն այն ժամանակ, երբ Լիւբիկը, վիլայէթի ամենահարուստ քաղաքը, զգալի կերպով ստեղծեց: Ուրիշ մանրամասնութիւններ դեռ չը կան: Անգորայի նահանգապետ Թէվֆիկ փաշային յանձնարարված էր անմիջապէս գնալ Լիւբիկ:

Մի ուրիշ լրագիր հետեւալն է հաղորդում Լիւբիկի խառնակութիւնների մասին. «Խառնակութիւնների պատճառը տեղական քիւրդ ցեղերի զիջատիչ ինստիտուտներն են, որովհետև նրանք կամենում էին խլել հայերից այս տարվայ ամբողջ բերքը, մինչ հայերը, խաղաղութիւնը պահպանելու համար, առաջարկում էին նրանց բերքի կէտը»:

ՖՈՒԱԴ-ՓՈՒԱՅԻ ԿՏԱԿԸ

«Revue de Paris» հանդէսի նոյեմբերի 1-ի համարում տպագրված է Ֆուադ-փաշայի քաղաքական կտակը: Յայտնի է, որ Ֆուադ-փաշան, ինչպէս և Բաշիդ ու Ալի փաշաները, թիւրքաց կայսրութեան վերջին ընթերցանատու մինիստրներն էին: Սովորաբար Ալեքսը Ալիքի ճանապարհորդութիւնից յետոյ Ֆրանսիայում և Անգլիայում, Ֆուադ-փաշան, որ ընկերանում էր սուլթանին՝ Կոնստանդնուպոլիսում, ինչպէս և Ֆուադ-փաշան, որ ընկերանում էր սուլթանին՝ Նիցցայում, որտեղ և վախճանվեց: Մահից առաջ նա գրեց և ուղարկեց սուլթանին իր կտակը:

Այդ վաւերագիրը, չը նայելով որ բաւական հնացած է, դեռ չէ կորցել իր հետաքրքրութիւնը: Եւ եթէ Հանտօս Ֆրանսիական պարլամէնտում արտառանած իր ճառից առաջ կարգացած լինէր այդ կտակը, շատ կարելի է, Թիւրքիայում թողով անիշխանութեան պատասխանատուութիւնը չը գցէր հայերի ասպատակութեան վրա: Թողնելով մի ուրիշ անգամի՝ այդ վաւերագրի ամբողջ թարգմանութիւնը մեր ընթերցողներին հաղորդելու, առ այժմ կը բերեմք մի քանի ընթերց կարեւոր:

Խօսելով թիւրքաց կայսրութեան դրութեան մասին և համեմատելով նրան ուրիշ պետութիւնների հետ՝ Ֆուադ, ուղղելով խօսքը սուլթանին, ասում է. «Չեմ գոյութիւնը այժմ Եւրոպայում պահպանելու համար, դուք պէտք է ոչ միայն համեմատեք ձեզ ձեր նախորդների հետ կամ զերազանցէք նրանց, այլ պէտք է ձեզ համեմատեք ձեր եւրոպական եղբայրակիցների հետ և նրանցից առաջ անցնէք: Որպէս զի միտքս աւելի պարզ կերպով ձեզ բացատրեմ, ես կասեմ, որ ձեր կայսրութիւնը, անկումից ազատվելու համար պէտք է հարուստ լինի, ինչպէս Անգլիան, Ռուսաստանը: Մեզ բաւական չէ միայն առաջադիմել, մենք պէտք է առաջադիմենք, ինչպէս Եւրոպան»:

Այս հեղինակը ապացուցանում է, որ մահատականութիւնը չէ կարող առաջադիմութեան խօչնդոտ հանդիսանալ և աւելացնում է. «Նըրանք, որոնք մտածում են այդ կերպի անունով արգելք հանդիսանալ առաջադիմութեան, ամենին մուսուլմաններ չեն. նրանք խելագարներ են և անհաւատներ: Բոլոր միւս կրօնները կարող են զոգմաններով և անխիղիւր սկզբնաւորներով: Միայն խալիֆականութիւնն է ազատ միադիմելից և պարտաւորութիւնն է դնում մեզ

վրա աշխարհի հետ միասին առաջ շարժվել: Դարգայնել մեր մտաւոր կարողութիւնները, որոնք Լայս և գիտութիւն ոչ միայն Արաբիայում, ոչ միայն մուսուլման քաղաքներում, այլ և օտար երկրներում, ջնխատեսանում—աշխարհի ծայրում: Ես բաւականաչափ ուսուցանալի եմ կրօնը, նրա էութիւնը հասկանալու համար իմ միտքս բաւական պարզ է իմ գաղափարների նշանակութիւնը և էութիւնը բնութեւնը համար և, ի հարկէ, այժմ, վերահաս մահի դէմ առ դէմ կանգնած, երբ ես պէտք է երեսմ աշխարհի ամենապարզ դատաւորի առաջ, ես չեմ գաւաճանի իմ հրամանատարին, հայրենիքին և կրօնին»:

Տխուր իրականութիւնը պարզ կերպով ցոյց տուեց, թէ որքան ճիշդ էին ձեռնարկ մինիստր-փիլիսոփայի գուշակութիւնները: Ինչպէս պէտք է ցուի այժմ ամեն մի հայրենասէր թիւրքի սիրտը, դիտելով այն կործանման տեսարանը, որ հետեւեց է միայն տղէտ և ֆանատիկոս կառավարութեան:

Անցնելով արտաքին յարաբերութիւններին, հեղինակը գրում է. «Մեր գաշակիցների շարքում Անգլիան առաջին տեղն է գրաւում: Անգլիական քաղաքականութիւնը և բարեկամութիւնը նոյնպէս յարաւան են, ինչպէս և նրա հաստատութիւնները: Նա մեզ շատ ծառայութիւններ է մատուցել և մենք չենք կարող կառավարվել առանց նրա աջակցութեան: Ես նախամեծար կը համարէի կորցնել մի քանի նահանգներ, քան տեսնել Բ. Գուրը Անգլիայից լքված: Ֆրանսիան մի գաշակից է, որը մեզ պէտք է մեր ձեռքում պահենք մինչև վերջին հարաւորութիւնը: Ոչ նրա համար, որ նա մեզ կը պահպանի, այլ որովհետև նա կարող է մեզ մահացու հարուած տալ: Այդ ասպետական ազգը աւելի զգացումներ ունի, քան հայիւներ: Նա շնորհ է մեծ իրեաների փառքով: Այդ մեծահոգի ազգի բարեկամութիւնը պահպանելու ամենապարզ միջոցը կը լինի իւրացնել նրա գաղափարները»:

Այժմեան Ֆրանսիան ցոյց է տալիս, որ այդ վկայութիւնը շատ հեռու է իրականութիւնից: Աւստրիայի և Պրուսիայի մասին փորը նկատողութիւններ անելուց յետոյ, հեղինակը խօսում է և Ռուսաստանի մասին: Նրա կարծիքով միակ վտանգը Թիւրքիայի ամբողջութեան և ընդհանրապէս Եւրոպայի խաղաղութեան համար Ռուսաստանն է հանդիսանում: Նրա հետ կուսու համար ոյժ է հարկաւոր և այդ ոյժը դարձեալ կարելի է քաղել գիտութիւնից և ընթերցաններից:

Գալով ներքին գործերին և թիւրքաց կայսրութիւնը կազմող զանազան ազգութիւնների դրութեան, Ֆուադ-փաշան գրում է. «Բ. Գուրը պէտք է խախտի հայ և ուղղափառ (յուսաւազաւան) եկեղեցիների միութիւնը: Գուցէ ցանկ կայի կը լինէր նպատակ փիլիսոփայական մտքի զարգացման քրիստոնեայ ազգութիւնների մէջ, որովհետև այդ միտքը կարող է մօտեցնել մարդկանց, ազատելով նրանց կրօնականութեան աղիւցեցութիւնից: Մի և նոյն ժամանակ չապարհում ամ աւելացնել, որ մեզ համար լուրջ քաղաքագիտութիւն կը լինէր մեր պետութիւնը բոլոր կրօնական հարցերից բարձր դնել: Մեր ներքին գործերում, մեր մտածմունքը պէտք է ուղղվի դէպի մի նպատակ—մեր ցեղերի ձուլումը, առանց այդ ձուլման մեր կայսրութեան գոյութիւնը ինձ անհարկին է թվում: Այս ահաղին կայսրութիւնը չէ կարող պատկանել ոչ յոյներին, ոչ սլաւոններին, ոչ այս կամ այն կրօնին և ոչ Ռուսաստանին: Արեւելեան կայսրութիւնը չէ կարող գոյութիւն ունենալ առանց արեւելեան ազգութիւնների»:

Խօսելով հասարակական պաշտօնների բաշխման մասին, Ֆուադ-փաշան նկատում է. «Ընտրից ազատված մեր քրիստոնեաները, երևում է, շատ են չապարհում փոխել իշխողներին: Հայերը աշքի են ընկնում իրանց ամենից շատ ընդունակութիւններով, ուստի արդարացի կը լինէր նըրանց եռանդը սատակացնելու համար, ընդունել նրանց հանրային ծառայութեան մէջ, բայց միայն նրանց, որոնք կառավարելապէս խոտաղանում են մեր կայսրութեան ամենազգալիստը սկզբնաւորները»:

Այս կտակը բացի այն, որ պատմական հետաքրքրութիւն ունի և ժամանակակից իրականութիւնը լաւ լուսաբանում է, մի ուրիշ նշանակութիւն էլ ունի. ներկայ երիտասարդ-թիւրքական շարժումը գաղափարական տեսակէտից ուրիշ բան

Издания „Этнографического фонда имени Н. О. Эмина“

Выпуск I: История Армении Моисея Хоренского, новый перевод Н. О. Эмина, с при-
мечаниями и приложениями: (посмертное издание); Москва, 1893, стр. XXXVI + 323. Цѣна 2
рубля, съ пересылкою 2 р. 25 к.

Выпуск II: Исследования и статьи Н. О. Эмина по армянской мифологии, археологии, исто-
рии и истории литературы (за 1858—1884 гг.), с приложением переводовъ изъ армянскихъ
историковъ, Москва, 1896, стр. VII + 431. Цѣна 2 р., съ пересылкою 2 р. 40 к.

Складъ изданій въ Правленіи Лазаревского Института Восточныхъ языковъ въ Москвѣ,

Въ правленіи же Института имѣются для продажи въ небольшомъ числѣ экземпляровъ слѣдующія
сочиненія и изданія Н. О. Эмина.

- | | |
|--|------------|
| a) на армянскомъ языкѣ: 1. Всеобщая История Вардана Великаго (XIII в.), Москва, 1861 (editio princeps) | 2 р. — к. |
| 2. Хронографія Мхитара Айриванскаго (XIII в.), Москва, 1860 (ed. princ.) | 1 р. — к. |
| b) на русскомъ языкѣ: 3. Всеобщая история Степаноса Таронскаго, Асохика по прозванію (XI в.) переводъ съ армянскаго, съ объясненіями и приложениями Москва, 1864 | 4 р. — к. |
| 4. Синодальное слово Нерсеса Ламбронскаго (XII), пер. съ арм. М. 1864. | 2 р. — к. |
| 5. Армянскія надписи въ Карсѣ и Ани и въ окрестностяхъ послѣдняго, текстъ и переводъ, М. 1881. | 1 р. 50 к. |
| 6. Очеркъ Исторіи Армянской Восточной церкви, М. 1864. | 25 к. |
| 7. Очеркъ религіи языческихъ армянъ (изслѣдов.) М. 1864. | 75 к. |
| 8. Огнѣтъ на замѣчанія г. Патканова, М. 1874 | 50 к. |
| 9. Моисей Хоренскій и древн. эпосъ армянскій (изслѣд.) М. 1881. | 75 к. |
| 10. Династическій списокъ Хайкидовъ (изслѣд.) М. 1884 | 50 к. |
| 11. Сказаніе о свв. Ромѣ и Давидѣ (Борисѣ и Глѣбѣ) по арм. Четы-
Минемъ (перев. съ армянскаго), М. 1877. | 50 к. |

1—2

Մեծ Մոսկովյան Հիօրուոն (Большая Московская Гостиница)

(ՐՈՍՏՈՎ ԴՕՆԻ ՎՐԱ)

Սրանով յայտարարվում է, որ Րոստովյան Մեծ Սաղոմայա փողոցի վրա, հայ աղքատների եկեղեցական հոգաբարձության պատկանող տան մեջ, բացվել են ԱՌԱՋ-
ՆԱԿԱՐԳ ՀԻՌԱՆՈՆ և ՋՍԵՄԻԱՆ, առեն տեսակ յարմարություններով, ձուխ և չքեղ կահ
կարասիքով զարդարված են սենյակները և երեքտարակա լուսավորված: Կայ փեր
բարձրանալու ՄԵՔԵՆԱՅ, ԼՈՂԱՐԱՆ և բնակիչների համար պէտք եղած միւս բոլոր
պարագաները, եւրօպական առաջնակարգ հիւրանոցների օրինակով: Հիւրանոցը ունի
մինչև անգամ Թարգմաններ: (№ 130) 1—16

ОТКРЫТА ПОДПИСКА НА ТРИ ИЗДАНИЯ НА 1897 Г.

I.

Издания „НОВОСТИ ДНЯ“ Годъ XV-й

Ежедневная газета, съ портретами государственныхъ и общественныхъ дѣятелей. Подписная
цѣна въ Москвѣ и на города: съ доставкою—на годъ 8 р., на шесть мѣсяцевъ—5 р. 50 к.,
на три мѣсяца—3 р., на одинъ мѣсяць—1 руб.

II.

„НОВОСТИ ИНОСТРАННОЙ ЛИТЕРАТУРЫ“

Выходитъ ежемѣсячными книжками и даются въ русскомъ переводѣ лучшія произведенія ино-
странныхъ писателей: французскихъ, нѣмецкихъ, англійскихъ, итальянскихъ, шведскихъ и
проч. Подписная цѣна на годъ 3 р. Въмѣстѣ съ ежемѣсячнымъ литературнымъ приложеніемъ
„СЕМЬЯ“ на годъ 4 рубля.

III.

Еженедѣльное иллюстрированное литературное приложеніе

„СЕМЬЯ“

выходитъ по слѣдующей программѣ: изысканная литература (романы, повѣсти, рассказы, очерки, стихотво-
ренія, драматическія произведенія—оригинальныя и переводныя); научныя обзорныя, литературныя,
театральныя, музыкальныя и художественная критика; историческіе очерки и путешествія; биографіи;
спортъ всѣхъ видовъ; изобрѣтенія, хозяйственныя свѣдѣнія, моды, смѣсь; задачи, шарады, ребусы, игры,
музыкальныя ноты; почтовый ящикъ; иллюстрація ко всѣмъ отдѣламъ, портреты выдающихся дѣятелей,
рисунки, объясненія къ рисункамъ, виньетки и преміи

Подписная цѣна 2 р. въ годъ.

Подписная цѣна на всѣ три изданія 12 руб.

За эту сумму подписчикъ, слѣдовательно, получаетъ: 1) годовую экземпляръ газеты „Новости
Дня“, 2) ежемѣсячный журналъ „Новости Иностранной Литературы“; 3) еженедѣльное иллю-
стрированное приложеніе „Семья“.

„Новости Дня“ и „Новости Иностранной Литературы“ въ годъ—11 р. „Новости Дня“ и
„Семья“—10 р.

Адресъ: Москва, „Новости Дня“.

Въ главной конторѣ „Новости Дня“ продается АЛБОМЪ

„Коронаціонныя Торжества“

(Изданіе „Новости Дня“ и „Семья“).

Альбомъ отпечатанъ на хорошей бумагѣ и заключенъ въ изысканную обложку, украшенную ак-
варельнымъ рисункомъ Л. О. Пастернака. Текстъ альбома заключается въ себѣ историческую
часть и подробное описаніе коронаціонныхъ торжествъ въ маѣ 1896 г. Въ альбомѣ помѣщено
90 рисунковъ и 100 портретовъ и группъ. Цѣна альбому 2 руб., съ пересылкой 2 р. 50 к.
(№ 128) 1—3



ԲԻՄԻԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

ԲԻՍՓՈՒՏՄԱՆԻ

(Տնային գործածութեան համար)

ՀԵՂԻՎԱԿԱՆ ՄԻՋՈՒՆԱ, այն է հաստատ մահ մկներին, խուրդներին և ուրիշ կրծողներին
Այս միջոցը արտադրում է այդ կենդանիների գլխաւորապէս բնակարաններէջ, այնպէս որ նրանք
չեն մնում գետնաթաղի տակ և չեն տարածում գարշահոտութիւն:

ՄԱՍԿԵՆԻ ԴԵՄ ՀԵՂԻՎԱԿ, ոչնչացնում է նրանց ընդմիջաւ: Նա չառ հաճելի հոտ ունի և
բիժ չէ թողնում ճերմակեղէնի, կոշիկների և կարասիքի վրա: Փոշիացնելով նրան, սենյակի օդին
հաճելի թարմութիւն են հաղորդում և միաժամանակ հալածում են ցեղը, ճանճը և մոծակները:

ՓՈՇԵՒ ՄԻՋՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ, առնալարմար միջոցն է բոլոր միջատները և նրանց սպողները
բոլորին ոչնչացնելու համար: Այդ փոշին անփոխարինելի է լուսնի և մակների ոչնչացնելու հա-
մար անկողիններում, ներքնակներում, թաղիքով պատած փայտային պատերում: Ոչնչացնելով ցե-
ղը և չունենալով հափթալի մահաճոյ հոտը, այս փոշին բոլորովին փութարկում է նրան. դրա
համար հարկաւորութիւն չը կայ ամառը սալ մուշտակները և ուրիշ մարմնէկէն իրերը պահելու
համար: Փոշու աղբեղութիւնը, երբ նրան գործադրում են առնալ միջատների, մրջյունների
հղէմ—գրեթէ վայրկեանական է—հետևանքը զարմանալի: Հարցնել դեղավաճառական խանութներում:

(№ 23)

22—50

ԼՈՅՍ Է ՏԵՍԵԼ ՓԱՌԱԿԱԶՄ ԵՒ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԳ

Օ Ր Ա Յ Ո Յ Յ 1897 թ.

Ս. ԷԶՄԻԱՆԻ

ՎԵՃ. ԿԱՌՈՂԻԿՈՍԻ, Ս. ԷԶՄԻԱՆԻ, ԳԵՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ և այլ պատկերներով զարդարած
ԳԻՆՆ Է 20 Կ.

Վաճառվում է թիֆլիսում, Կենտրոնական և «Արարատ» գրավաճառանոցներում, վիճակային
կոնսիտորիաներում և հոգեւոր կառավարութիւններում: Մեծ քանակութեամբ գնողին 20% զի-
ջումն, եթէ գինն ու էջմիածնի տպարանական ժողովին այս հասցեով: ՏՎ. ԵՄԻԱԶԻՆ, Կո-
միտէ, Կոմիտէ.

(№ 131)

2—10

ԹԻՎԻԲՈՒԼԻ ՔԱՐԱԾԻԱՅԻՆ ՀԱՆՔԵՐԻ ԵՒ ԲՐԻԿԵՏԻ

արդիւնադրութեան ընկերութեան վարչութիւնը սրանով յայտարարում է ի գիտու-
թիւն գնողների, որ յիշեալ ընկերութեան բրիկէտների վաճառումը լինում է իր տեղում,
պուրը 13 կողէկով: Մանրամասն պայմանները կարելի է իմանալ հանքերի գրասենեակում:
Հասցեն հեռագիրների համար՝ «Կեմբուլսկի Կոմիտէ, Կոմիտէ, Կոմիտէ» նամակների համար—Կյ-
տայն—Կեմբուլս, Կոմիտէ Կեմբուլսկի Կոմիտէ և Բրիկետի Կոմիտէ.

9—15

ԼՈՅՍ ՏԵՍԵԼ Մ. ՉՄԵԿԵԱՆԻ

„Պ Ա Տ Ի“, „Շ Ո Յ Ի“ և „Պ Ա Տ Կ Ե Ր Ա Ջ Ա Ր Դ“ 1897 թ.

ՕՐԱՅՈՑՑՆԵՐԸ

Յանկացողները թող շտապէն յայտնելու, որպէս զի պատուէրները ժամանակին կա-
տարվեն: (№ 120) 11—15

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԽՈՐՀՈՒՐԴԻ յայտնում է ի գիտութիւն ընկերութեան բոլոր անդամների, որ նո-
յնների 17-ին, կիրակի, երեկոյան ժամը 7-ին Գումայի դահլիճում նշանակված է
ընդհանուր ժողով, որի պարագմունքի առարկաները լինելու են՝

- 1) Ընկերութեան ընդհանուր, այն է կենտրոնի (խորհուրդ) և 18 ձեռնարկի 1895
թ. հաշիւների ընդմիջումը ու հաստատութիւնը:
- 2) Վերաստուգող յանձնաժողովների ղեկուցումները այդ հաշիւների մասին:
- 3) Հին-Նախիջևանի և Յիւրիկալի տեղական վարչութիւնների նախահաշիւները և
կարգի ու Արմաւիր յաւելածական նախահաշիւները 1896 թ. համար:

Ընկերութեան 1895 թ. տեղեկագիրը տպագրված լինելով, անդամները կարող են
մի մի օրինակ ստանալ զիմելով ընկերութեան գրասենեակը (Սէրգիւկիսկայա փողոց
տուն № 16-)

2—3

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ՐՈՍՄԻԱ“

Բարձրագոյն հաստատված 1881 թիւ

Ս. Պետերբուրգում, Большая Морская, № 37.

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՇՏՈՒՄ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 25.500,000 ՐՈՒԲԼԻ

Ընկերութիւնը ընդունում է:

ԿԵՆՏՐՈՆ ԸՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Այսինքն զրամագրի և եկամուտի ապահովութիւն ընտանիքի համար, կամ
ձերութեան ժամանակ, օգիտ աղջիկեանց համար, ստիպելու երեխաների հա-
մար և այլն. առանձին չահաւէտ պայմաններով. ապահովագրողները մասնակցում
են ընկ. օգուտին:

Առ 1-ին յունիսի 1896 թ. «ՐՈՍՄԻԱ» ընկերութիւնը ապահովագրած ունի
35.563 անձ,—91.406.948 ՐՈՒԲԼԻ գումարի:

ԴԻԲԻՍԻՑ ԴԵՊՔԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Ինչպէս առանձին անձանցի նոյնպէս և հաւաքական անձանց, այն է—գործա-
րաններում ծառայողների, բանւորների և այլն՝ նաւաղեցրած վճարներով՝ չոր-
հիս զիմելու են, որը վճարներից դուրս է հաշվում:

ՀԻՐԵՆԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

առնալ տեսակ շարժական և անշարժ կապքերի (չիւնութիւնների, մեքենաների, ապ-
րանքի, կահ-կարասիքի և այլն):

ԱՊՐԱՆՔԻ ՓՈԽԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

զետային, ցամաքային և ծովային. նաւերի ապահովագրութիւն.

Ապահովագրութիւն ընդունվում է Ս. Պետերբուրգում (Большая Морская, 306.
д. № 37.) Թիֆլիսում Սերգիւկիսկի փողոց, № 6. և զանազան քաղաքների գոր-
ծակալութիւններում.

Նոյնպէս կարելի է ստանալ ապահովագրական տոմսակներ դժբաղտ դէպքերից,
երկրաթիւղով կամ չորհեւաւով ճանապարհորդած ժամանակ, երկրաթիւղային կա-
յարաններում և ծովամատուցներում:

(№ 89)

(2) 33—52

ԿԱԿԱՕ ԲԼՈՕԿԵՐ

ՍՆՆԴԱՐԱՐ ԽՄԻՉԻ, արկղիկներում, 1/1, 1/2, 1/4 և 1/8 կիլոգրամ:

(GRAND PRIX) Բարձրագոյն պարգև: Անադէրպէնի 1894 թիւի համաշխար-

հային ցուցահանդիսում:

Գլխաւոր պահեստը՝ ղեկարարական ապրանքների Բարձրագոյն հաստատված

Կովկասեան ընկերութիւնը Թիֆլիսում:

(№ 6)

(Է)

42—50